ՄԱՐԻԵՏԱ ՂԱԶԱՐՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ,
3-րդ կուրս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *պարենային անվտանգություն, ինքնաբավության մակարդակ, պարենային հաշվեկշիռ, սպառողական զամբյուղ, մատչելիություն, ներմուծում*

Պարենային անվտանգության ապահովումն ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է: Պարենային անվտանգությունը սերտորեն փոխկապված է սոցիալ-տնտեսական կայունության և երկրի տնտեսական զարգացման հետ: Աշխարհաքաղաքական զարգացումները, մասնավորապես՝ ռուս-ուկրաինական պատերազմը, ցույց են տալիս, որ ՀՀ-ին անհրաժեշտ է այլընտրանքային ուղիներ փնտրել հիմնական պարենամթերքների ներմուծման համար, քանի որ և՛ Ռուսաստանը, և՛ Ուկրաինան Հայաստան ներմուծվող սննդամթերքի հիմնական շուկաներ են:

Հոդվածում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել պարենային անվտանգության էությունը, գնահատել ՀՀ-ում պարենային անվտանգության մակարդակը, առաջարկներ անել ներկայիս տնտեսական պայմաններում ՀՀ-ում առկա պարենային անվտանգության մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: Հոդվածում վերլուծվել է վերջին տարիներին ՀՀ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը, ինչպես նաև 2021 թ. ՀՀ պարենային հաշվեկշիռը: Արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ վերջին տարիներին ՀՀ-ն ցածր ինքնաբավության մակարդակ ունի ցորենի, բուսական յուղի, շաքարավազի, թռչնի և խոզի մսի գծով: Առաջարկվել է հայրենական արտադրանքը խթանել՝ սեփական արտադրողներին արտոնություններ տրամադրելով, ինչպես նաև վարել կոշտ և թիրախավորված պետական քաղաքականություն:

Ներածություն: Պարենային անվտանգությունը իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է՝ ուղղված հասարակության յուրաքանչյուր անդամին, այդ թվում՝ բնակչության առավել խոցելի հատվածներին անհրաժեշտ որակի և բավարար քանակությամբ, առողջության համար անվտանգ պարենով լիարժեք ապահովմանը և կարող է սպառվել նրանց կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության պայմաններում: Բնակչության պարենային անվտանգության ապահովումը 21-րդ դարի առաջնային խնդիրներից է: Այն ակնառու է դարձել 20-րդ դարի կեսերին, երբ պարենային արտադրանքի պակասուրդը և դրա հետևանքները ամբողջ աշխարհում առավել հրատապ դարձան:

Երկրի պարենային անվտանգությունը հիմնականում ապահովվում է գյուղատնտեսության, սննդամթերքի արտադրության և սննդի ներմուծման համակարգերի զարգացման միջոցով: Այս իրավիճակում կարևոր է, որ երկիրը կարողանա բալանսավորել սեփական արտադրության և ներմուծման ծավալները՝ ներմուծումից կախվածությունը նվազեցնելու նպատակով: Ինչպես նշված է Պարենային անվտանգության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 6-ում (5-ը հունիսի 2002 թ., ՀՕ-339),

«Պետության պարենային անկախությունը համարվում է ապահովված, եթե կենսապես կարևորագույն սննդամթերքների տեղական արտադրության և պետական պարենային պահուստի ծավալներն ապահովում են պարենային ճգնաժամի կանխարգելումը: Պարենային անկախության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման համար պատասխանատվությունը կրում է կառավարությունը»[1]: Հաշվի առնելով տարածաշրջանային, աշխարհաքաղաքական, ռազմական ու տնտեսական ներկայիս թեժ գործընթացները՝ աներկբա է, որ սույն հոդվածում ներկայացված խնդիրն արդիական է Հայաստանի Հանրապետության համար:

Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ պարենային անվտանգության արդի հիմնախնդիրները և հնարավոր լուծումներ առաջարկել պարենային անվտանգության բարձր մակարդակ ապահովելու համար:

Գրականության ակնարկ: «Պարենային անվտանգություն» եզրույթն առաջին անգամ ներդրվել է Պարենի համաշխարհային անվտանգության մասին Հռոմի հռչակագրում: Համաձայն դրա՝ պարենային անվտանգությունը մի իրավիճակ է, երբ բոլոր մարդկանց համար ցանկացած պահի առկա է ակտիվ գործունեությանը քանակապես բավարարող և անվտանգ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական հասանելիությունը[2]: 1970-ական թվականների կեսերին, ի տարբերություն զարգացած երկրների, որտեղ պարենային ապրանքների արտադրության խնդիր գոյություն չուներ, «երրորդ աշխարհի» երկրներում զանգվածային բնույթ էին կրում սովն ու թերսնումը[3]:

Ջրի, սննդի և էներգետիկ անվտանգության ապահովումը բոլոր երկրների հիմնական առաջնահերթություններից է: Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիություն[4]:

Պարենային անվտանգության խնդիրների ուսումնասիրությամբ 20-րդ դարի սկզբներից զբաղվել են այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Ն.Դ. Կոնդրատևը, Ա.Վ. Չայանովը, Վ.Ֆ. Մայերը, Վ.Մ. Ռուտգայզերը և շատ ուրիշներ[5]: Ավելին, Կոնդրատևը և Չայանովը պարենային անվտանգության խնդրի առաջին համակարգողներն են եղել Ռուսաստանում: Իսկ անցյալ դարի 60-ական թվականներին Մայերն ու Ռուտգայզերը ուսումնասիրել են արտադրության և սպառման փոխկապվածությունը և սահմանել դրանց միջև օպտիմալ համամասնությունը[6]:

---

[1] Հայաստանի Հանրապետության օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին, 5 հունիսի 2002 թ., ՀՕ-339, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1312&lang=arm

[2] Տե՛ս What is Food Security? https://www.worldbank.org/en/topic/agriculture/brief/food-security-update/what-is-food-security

[3] Տե՛ս **Ավետիսյան Ս.,** Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ, Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 16 («Ամբերդ» մատենաշար), https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Avetisyan_S.pdf

[4] Տե՛ս ՀՀ գյուղատնտեսության նախարարություն/ Գյուղատնտեսությունը Հայաստանում/ Պարենային անվտանգություն, http://old.minagro.am/

[5] Տե՛ս **Тихомирова В. А.,** Продовольственная безопасность: сущность понятия, //Вестник РЭУ им. Г. В. Плеханова 2015, 6 (84), էջ 124:

[6] Տե՛ս **Ускова Т.В., Селименков Р.Ю., Анищенко А.Н., Чекавинский. А.Н.**, Продовольственная безопасность региона, монография, Вологда, ИСЭРТ РАН, 2014, էջ 6:

Պարենային անվտանգության ապահովումը համաշխարհային մակարդակում անցել է մի շարք փուլեր:

Աղյուսակ 1

Պարենային անվտանգության հիմնախնդրի էվոլյուցիան[1]

1940-1950 թթ.	Պարենի ավելցուկի վերաբաշխում պարենային օգնության հակաֆաշիստական կոալիցիայի երկրներին
1960-ական թթ.	Պարենի զարգացման համար հումանիտար օգնություն «երրորդ աշխարհի» երկրներին
1970-ական թթ.	Պարենի մատչելիության երաշխիքներ՝ պարենային շուկայի կարգավորում
1980-ական թթ.	«Պարենային անվտանգություն» հասկացության ընդլայնում՝ ինքնաբավություն և կայունություն, «կանաչ հեղափոխություն»
1990-ական թթ.	Պայքար սովի և թերսնման վերացման համար՝ միջազգային համագործակցություն, տեխնոլոգիական աջակցություն
2000-ական թթ.	Սննդամթերքի անվտանգության և որակի բարձրացում, կայուն զարգացում՝ էկոլոգիական գյուղատնտեսություն, անվտանգության և որակի մշտադիտարկում

Համաձայն Համաշխարհային պարենային անվտանգության կոմիտեի (CFS) բարեփոխումների փաստաթղթի՝ պարենային անվտանգության հիմքերն են.

- առկայություն (սննդի),
- մուտք (ներմուծում),
- օգտագործում,
- կայունություն[2]:

ՀՊՏՀ դասախոս Տաթևիկ Վարդանյանը և Հայ-ռուսական համալսարանի ուսանող Սուրեն Մինասյանը «ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները» հոդվածում[3] խոսել են ՀՀ-ի առջև ծառացած պարենային խնդիրների մասին՝ նշելով, որ 2050 թ. երկրագնդի բնակչությունը կհասնի 9 միլիարդ մարդու, իսկ սննդամթերքի պահանջարկը կաճի 60%-ով: Խոսվել է վերջին զարգացումների մասին, հատկապես՝ ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի Դաշնության դեմ պատժամիջոցների, որոնք կարող են հանգեցնել արտադրության կարողությունների կրճատման՝ կապված պարենային անվտանգության, սննդամթերքի արտահանման սահմանափակումների և լոգիստիկ շղթաների խաթարման հետ, և զգալի ռիսկեր են ներկայացնում սննդամթերքի արտաքին շուկաներից կախված երկրների համար:

Նշվել է, որ պետական կառավարման սահմանափակությունը և տեխնոլոգիական արագ զարգացումների վրա հիմնված նորարարական լուծումներ գտնելու անհրաժեշտությունը, ժամանակակից հասարակության սոցիալական խնդիրները պահանջում են քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածություն: Առաջարկվել է ներդնել հատուկ ենթակառուցվածքներ, օրինակ՝ սննդի բանկեր:

---

[1] Տե՛ս **Ավետիսյան Ս.**, ՀՀ պարենային անվտանգության հրատապ խնդիրները, Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 16 («Ամբերդ» մատենաշար):

[2] UNO Food and Agriculture **Organization** https://www.fao.org/cfs/en/

[3] Տե՛ս **Վարդանյան Տ., Մինասյան Ս.,** ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները, Եր., Բանբեր ՀՊՏՀ, 2022, https://asue.am/upload/files/science/banber/2022-year-6/4.pdf

Ներկայումս հետազոտություններն ավելի հաճախ են ուսումնասիրում տեխնոլոգիական բաղադրիչը, քանի որ 21-րդ դարում տեխնոլոգիաների ներդրումից հետո արդիական է դառնում գյուղատնտեսության ոլորտի վրա ազդեցության վերլուծությունը, հատկապես՝ պարենային համակարգերի վերափոխման համատեքստում:

Մեթոդաբանություն: Հոդվածում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական տնտեսագետների ուսումնասիրությունները, ՀՀ օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին, ՀՀ պետական և մասնավոր կազմակերպությունների զեկույցներն ու ռազմավարական ծրագրերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են որակական, քանակական, տրամաբանական, մաթեմատիկական (գրաֆիկական), վիճակագրական և համեմատական վերլուծության մեթոդներ: Քանակական և որակական վերլուծության մեթոդը կիրառվել է խնդրի քանակական կողմը գնահատելու և դրա հիման վրա եզրակացություններ կատարելու համար: Օգտագործված տրամաբանական մեթոդի շնորհիվ հնարավոր է դարձել խնդիրը վերլուծելիս կատարել տրամաբանական հետևություններ: Մաթեմատիկական մեթոդի կիրառությունը թույլ է տվել երևույթը ներկայացնել գրաֆիկորեն, ինչպես նաև՝ շատ տվյալներ ստանալ մաթեմատիկական գործիքակազմի կիրառման միջոցով: Վիճակագրական վերլուծության մեթոդն օգտագործելը անհրաժեշտություն էր, քանի որ այն հնարավորություն է տալիս վերլուծել գոյություն ունեցող փաստացի տվյալները, նյութերը և դրանց հիման վրա բացահայտել որոշակի օրինաչափություններ: Համեմատական վերլուծության մեթոդով առավել ակնառու է ցուցանիշների փոփոխությունը: Տեղեկությունների աղբյուր են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի, միջազգային այնպիսի կազմակերպությունների հրապարակումները, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը և այլն:

Վերլուծություն: Գլոբալացման գործընթացը յուրաքանչյուր երկրի համար ոչ միայն հնարավորությունների բացահայտման միջոց է, այլ նաև առաջացնում է բազում վտանգներ և ռիսկեր[1]: Աշխարհում կա բավականաչափ սննդամթերք, որպեսզի բնակչությունն ապահովված լինի, այդուհանդերձ, համաձայն ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների, միայն 2020 թ. 768 միլիոն մարդ լիարժեք կերպով չի բավարարել պարենի նվազագույն պահանջները: Այս տվյալը, 2019-ի համեմատ, ավելացել է 118 միլիոնով[2], ինչի գլխավոր պատճառը COVID-19 համավարակն էր: Պարենային անվտանգությունը կապված է մոլորակի ավելացող բնակչության և կենսոլորտի հնարավորության միջև ծագած անհամամասնության հետ: Համազգային մասշտաբով պարենային անվտանգությունը կապված է պետության՝ պարենային տեսակետից ինքնապահովված լինելու հետ:

Հայաստանի Հանրապետությունը այն երկրներից է, որի համար պարենային անվտանգության խնդիրը արդիական է:

---

[1] Տե՛ս **Մարկոսյան Ա.,** Տնտեսական անվտանգության հիմնախնդիրը. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2005, էջ 3:

[2] Տե՛ս ՖԱՕ Положение в области продовольственной безопасности и питания в мире - 2021, Глава 2 Продовольственная безопасность и питание в мире, էջ 12:

Աղյուսակ 2

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2019-2020 թթ.՝ միջին ընթացիկ գներով[1]

	Պարենամթերքի անվանումը	Օրական սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ		Տարեկան սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ		Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ		Միավորի գինը, ՀՀ դրամ		Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, ՀՀ դրամ	
		2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020
1	Հացամթերք	0.355	0.355	-	-	992.2	992.2	-	-	77 671.6	81 038.7
1.1	Հաց	0.25	0.25	91.3	91.3	622.5	622.5	503.8	522.7	45 996.9	47 722.5
1.2	Ալյուր	0.02	0,02	7.3	7.3	70.6	70.6	392.5	430.0	2 865.3	3 139.0
1.3	Մակարոնեղեն	0.015	0.015	5.5	5.5	55	55	575.2	620.5	3 163.6	3 412.8
1.4	ձավարեղեն (բրինձ)	0.05	0.05	18.3	18.3	175.5	175.5	777.4	832.9	14 226.4	15 242.1
1.5	ընդեղեն (լոբեղեն)	0.02	0.02	7.3	7.3	68.6	68.6	1564.3	1578.4	11 419.4	11 522.3
2	Մսամթերք (տավարի միս)	0.1	0.1	36.5	36.5	203	203	3054.8	2940.6	111 500.2	107 331.9
3	Կաթնամթերք, այդ թվում՝	-	-	-	-	339.7	339.7	-	-	89 922.8	90 471.5
3.1	կաթ, լիտր	0.2	0.2	73	73	122	122	371.6	376.0	27 126.8	27 448.0
3.2	Կաթնաշոռ	0.01	0.01	3.7	3.7	7.5	7.5	2391.7	2452.7	8 849.3	9 075.0
3.3	կենդանական յուղ	0.02	0.02	7.3	7.3	143.4	143.4	4910.4	4974.1	35 845.9	36 310.9
3.4	Պանիր	0.025	0.025	9.1	9.1	66.8	66.8	1989.1	1938.2	18 100.8	17 637.6
4	Կարտոֆիլ	0.25	0.25	91.3	91.3	167.5	-	215.6	167.0	19 684.3	15 247.1
5	Բանջարեղեն (կաղամբ, գլուխ սոխ)	0.3	0.3	109.5	109.5	87	87	197.9	156.5	21 670.1	17 136.8
6	Միրգ (խնձոր)	0.2	0.2	73	73	96	96	473.7	560.8	34 580.1	40 938.4
7	Շաքար	0.05	0.05	18.3	18.3	193.5	193.5	266.9	355.5	4 884.3	6 505.7
8	Ձու, հատ	0.5	0.5	182.5	182.5	40	40	62.6	69.0	11 424.5	12 592.5
9	Բուսական յուղ	0.02	0.02	7.3	7.3	176.8	176.8	672.2	834.4	4 907.1	6 091.1
10	Մարգարին	0.01	0.01	3.7	3.7	72	72	1085.2	1052.2	4 015.2	3 893.1
11	Ձուկ	0.03	0.03	11	11	44.4	44.4	2552.4	2509.6	28 076.4	27 605.6
	Ընդամենը	-	-	-	-	2412.1	2412.1	-	-	408 336.5	408 852.4

[1] Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019/2020 թթ. հունվար-դեկտեմբերին, հավելված 2, Հետաքրքրաշարժ վիճակագրություն, էջ՝ համապատասխանաբար 253/275:

2021 թ. գրեթե բոլոր ապրանքատեսակները թանկացել են: Բնակչության կողմից պարենամթերքի սպառման իրական պատկերը ստանալու համար պետք է ուսումնասիրել բնակչության տարբեր սոցիալական խմբերի կողմից սննդամթերքի սպառման ծավալները: Աղյուսակում կատարվել է բնակչության բաժանում 5 խմբերի (20-ական %)՝ ըստ սպառման ծավալների: Առաջին խումբը բնակչության ամենաքիչ սպառող 20%-ն է, համապատասխանաբար 5-րդ խումբը՝ ամենամեծ ծավալներով սպառողը:

Աղյուսակ 3

ՀՀ-ում մեկ շնչի հաշվով սպառված պարենամթերքի էներգետիկ արժեքը՝ ըստ քվինտիլային խմբերի, 2017-2020 թթ., կկալ/օր[1]

	2017	2018	2019	2020
Քվինտիլ 1	1309	1311	1195	1222
Քվինտիլ 2	1687	1706	1553	1607
Քվինտիլ 3	1966	1995	1833	1888
Քվինտիլ 4	2323	2364	2201	2226
Քվինտիլ 5	3107	3172	3020	2969

Ըստ Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպության՝ նվազագույն կենսաապահովման էներգետիկ արժեքը կազմում է 2100 կկալ/օր[2]: Այս ցուցանիշը համեմատելով աղյուսակ 2-ի տվյալների հետ՝ կարող ենք ասել, որ ՀՀ-ում բնակչության մեծամասնության պարագայում պարենամթերքի սպառման էներգետիկ արժեքը ցածր է 2100 կկալ/օր մակարդակից: Սկսած 2008 թվականից՝ նվազագույն կենսաապահովման էներգետիկ արժեքը կազմում է 2232 կկալ/օր[3]: Այս ցուցանիշը համեմատելով 2020 թ. տվյալների հետ՝ կտեսնենք, որ առաջին 3 խմբերում չեն ապահովել այդ արժեքը:

Պարենային անվտանգության հաջորդ կարևոր բաղադրիչը պարենային ապահովվածության մակարդակի գնահատումն է, որը որոշվում է պարենային հաշվեկշռի միջոցով: Պարենային հաշվեկշիռը ագրեգացված և վերլուծական ցուցանիշների այնպիսի համակարգ է, որը ներկայացնում է երկրի պարենամթերքի հիմնական տեսակների ձևավորման աղբյուրները (արտադրություն, ներմուծում) և այդ պարենամթերքի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն: Պարենային հաշվեկշռի միջոցով է որոշվում հիմնական պարենամթերքի ինքնաբավության մակարդակը: Ինքնաբավության մակարդակ ասելով՝ հասկանում ենք տվյալ ապրանքի նկատմամբ երկրի պահանջարկի բավարարման աստիճանը սեփական միջոցների հաշվին:

---

[1] Տե՛ս ՀՀ ՎԿ, Հրապարակումներ՝ ըստ տարիների, Պարենային ապահովություն և աղքատություն, Պարենի օգտագործում, 2019-2021 թթ.:

[2] Տե՛ս WFP, Research, Assessment and Monitoring Division. 2020, էջ 17:

[3] Տե՛ս Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, Եր., «Տնտեսագետ», «Ամբերդ» մատենաշար, թիվ 48 2021, էջ 33:



Գծապատկեր 1. ***ՀՀ հիմնական պարենամթերքի ինքնաբավության մակարդակը 2017-2021 թթ.***[1]

Ինչպես տեսնում ենք, ՀՀ պարենային հաշվեկշռի ամենածանր հատվածը բաժին է ընկնում ցորենին, բուսական յուղին, շաքարավազին, թռչնի և խոզի մսին: Շաքարի ինքնաբավության մակարդակը 2021 թ. կազմել է 33.9% (աղյուսակ 3), որը, 2019-ի համեմատ, նվազել է 39.1%-ով: Ներմուծումից կախվածությունը զգալի է:

Թռչնի և խոզի մսի ինքնաբավության մակարդակները 2021 թ. կազմել են համապատասխանաբար 26.7և 53.2%: Թռչնի մսի արտադրության ոլորտում կարելի է վարել այնպիսի քաղաքականություն, որ Հայաստանը զարգացնի իր սեփական թռչնաբուծարանները: Խոզը համարվում է հեշտ բազմացող կենդանի, և այս ոլորտում ևս պետական աջակցության միջոցով կարելի է մթերումների մակարդակը կրկնակի ավելացնել:

Ամենախնդրահարույցը ցորենի ուղղությամբ Հայաստանի ինքնաբավության ցածր մակարդակն է: Գիտենք, որ Հայաստանի ցորենի պահանջարկի զգալի մասը բավարարվել է Արցախում ցորենի ցանքատարածությունների հաշվին: Սակայն, 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմից հետո օկուպացվեցին Հադրութի, Շահումյանի, Քաշաթաղի շրջանները, որտեղ հացահատիկի ցանքատարածությունները զբաղեցրել են 50,000 հա(ապահովելով հացահատիկային բերքի 47.4%-ը):

[1] Տե՛ս ՀՀ ՎԿ, Արմստատ բանկ, Պարենային ապահովություն, ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքախմբերի/ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների, 2019-2021 թթ.:

Աղյուսակ 4

ՀՀ ազգային պարենային հաշվեշիռ, 2021 թ. (հազ. տոննա)[1]

	Արտադրություն	Ներմուծում	Արտահանում	Օգտագործում
Ցորեն	97.2	330.4	9.6	791.3
Գարի	37.5	39.4	0.5	87.3
Կարտոֆիլ	364.6	15.3	53.6	622.6
Բանջարեղեն և բոստան. մշակաբույս.	751.4	62.5	102.7	965.0
Միրգ և հատապտուղ (բացի խաղողից)	323.0	105.5	146.2	466.5
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	3.3	5.7	0.0	11.7
Բուսական յուղ	0.2	27.7	0.0	32.2
Շաքար	23.3	53.1	7.7	107.0
Ձու	39.1	0.5	0.0	40.0
Կաթ	670.7	125.7	31.3	848.2
Տավարի միս	69.4	6.5	0.6	76.3
Խոզի միս	15.8	14.3	0.4	30.3
Ոչխարի և այծի միս	10.8	0.0	0.0	10.9
Թռչնի միս	14.6	40.4	0.2	57.8
Ձուկ	19.7	5.4	11.4	27.3
Խաղող	237.1	3.3	18.1	246.4

Ցորենը ՀՀ ներմուծվում է հիմնականում ՌԴ-ից: Հանրապետություն ներմուծվող ցորենի շուրջ 92%-ը ներկրվում է Ռուսաստանից: Ցորեն ներմուծում ենք նաև Ուկրաինայից՝ ներմուծման մոտ 7%-ը: Այստեղից հետևում է, որ Հայաստանը ցորենի շուկայի պահանջարկը բավարարելու այլ ճանապարհներ փնտրելու խնդիր ունի (մասնավորապես՝ սեփական արտադրության ծավալների մեծացման հաշվին), ինչն այսօր ավելին քան հրատապ է՝ պայմանավորված 2022 թ. փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական պատերազմով: Սրա հետ մեկտեղ, խնդիր առաջացավ՝ կապված ՌԴ Կառավարության ընդունած որոշման հետ, որի համաձայն՝ ցորենի արտահանումը ԵԱՏՄ երկրներ սահմանափակվում էր[2]: Ուստի, այլընտրանքային ուղի կարող է համարվել ԵԱՏՄ անդամ մեկ այլ պետությունից՝ Ղազախստանից ցորենի ներմուծումը: Վերջինս Ռուսաստանից հետո ցորենի բարձր ինքնաբավություն ապահովող երկրորդ երկիրն է: Ղազախստանը նաև ապահովում է միջազգային շուկայի 3%-ը: Առհասարակ, ցորենի ներմուծումից կախվածությունը վկայում է ցորենի սեփական արտադրության ծավալների ավելացման կարևորության մասին: 2021 թ. ցորենի բերքատվությունը կազմել է 16.8%[3], որը նախորդ տարվանից ցածր է 5.7%-ով: Ցորենի ինքնաբավության մակարդա-

[1] Տե՛ս ՀՀ ՎԿ, Արմստատ բանկ, Պարենային ապահովություն, ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքախմբերի/ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների, 2021 թ.:

[2] Տե՛ս О введении временного запрета на вывоз зерновых культур за пределы территории Российской Федерации, Постановление Правительства Российской Федерации от 14 марта 2022 г. № 362, М.:

[3] Տե՛ս ՀՀ ՎԿ, հրապարակումներ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2022, հունվար-հունիս, Պարենի առկայություն, էջ 34:

կը կարելի է բարելավել բերքատվության մակարդակի բարձրացման միջոցով ևս:

Բուսական յուղի ինքնաբավության մակարդակը 2021 թ. կազմել է 0.6%: Բուսական յուղի ներմուծման շուկայում ևս ՌԴ-ն ունի գերիշխող դիրք: Ըստ այս ոլոտի մասնագետների գնահատականների՝ ՀՀ-ն ունի բավարար ներուժ սոյայի յուղի տեղական արտադրությանը զարկ տալու համար: «Երկրագործական գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը կատարել է որոշակի ուսումնասիրություններ, համաձայն որոնց՝ ՀՀ-ն հնարավորություն ունի ապահովելու սոյայի 28-36g/ha[1] բերքատվություն, որը որոշակիորեն կկարողանա լուծել պարենամթերքի այս խնդիրը:

Ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակների պայմաններում հնարավոր պարենային ճգնաժամերի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է պետական պարենային պահուստներում ամբարվելիք սննդամթերքի անվանացանկի, կուտակման չափերի և ժամկետների հստակ և իրատեսական (օպտիմալ) սահմանում: Ընդ որում, պետական պարենային պահուստներում, առաջին հերթին, պետք է ամբարվի կենսապես կարևորագույն այն սննդամթերքի տեսականին, որի ինքնաբավության մակարդակը դեռևս ցածր է, մասնավորապես՝ պարենային ցորենը, բուսական (կենդանական) յուղը, շաքարավազը (շաքարը), մանկական սնունդը, պահածոյացված (վերամշակված) որոշակի արտադրանքը: Այդ ապրանքատեսակների կուտակման չափերը չպետք է գերազանցեն բնակչության և հատուկ սպառողների 1-2 ամսվա պահանջարկի ծավալները:

Եզրակացություն: Հոդվածում ներկայացված խնդիրների լուծման հրատապությունից ելնելով՝ կատարվել են խորքային վերլուծություններ, որոնցից կարելի է եզրահանգել.

- պարենային անվտանգությունը համարվում է երկրի ռազմական և տնտեսական անվտանգության անբաժանելի մաս:
- Պարենային անվտանգության կարևորագույն նպատակը երկրի համար առաջնահերթ պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացումն է:
- ՀՀ-ում ցածր է պարենի մատչելիության մակարդակը: Բնակչության ավելի քան 56%-ն ապահովված չէ նվազագույն կենսաապահովման էներգետիկ արժեքով:
- Պետք է խթանել հայրենական արտադրանքը: Առաջնահերթ պարենամթերքների գծով ինքնաբավության բարձր մակարդակ ապահովել:
- Ցորենի ինքնաբավության մակարդակ ապահովելու համար մշակել բարձր բերքատվությամբ տեսակներ՝ կառավարության կոշտ և թիրախավորված քաղաքականության միջոցով (սուբսիդավորում մեծ հողակտորներ ունեցողներին):
- Ցորենի պարենային անվտանգության ապահովվածության համար ներմուծման նոր շուկաներ հայտնաբերել (օրինակ՝ Ղազախստանը):
- Բուսական յուղի համար սկսել սոյայի և սոյայի յուղի արտադրություն՝ տեղական արտադրողներին արտոնություններ տրամադրելով:

[1] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1916349575248651&id=1614694332080845

- Թռչնի և խոզի մսի համար պետական քաղաքականություն վարել՝ համապատասխանաբար զարգացնելով սեփական թռչնաբուծարանները և ավելացնել կենդանու մթերումների մակարդակը:
- Ֆորսմաժորային իրավիճակներից խուսափելու համար ստեղծել առաջնային անհրաժեշտության պարենամթերքների 20%-ի չափով պետական պահուստ:
- Ձևավորել այնպիսի կառույցներ, որոնք կնպաստեն պետական միջոցների արդյունավետ և խնայողաբար օգտագործմանը և կկարգավորեն պարենային շուկան:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Պարենային անվտանգության ապահովման մասին»՝ ընդունված 2002 թ. մայիսի 7-ին, ՀՕ-339:
2. Ավետիսյան Ս., ՀՀ պարենային անվտանգության հրատապ խնդիրներ, Եր., «Տնտեսագետ», 2014:
3. Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, Եր., «Տնտեսագետ», «Ամբերդ» մատենաշար 48, 2021:
4. Վարդանյան Տ., Մինասյան Ս., ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները, Եր., Բանբեր ՀՊՏՀ, 2022:
5. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2005:
6. ՀՀ վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am
7. https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1916349575248651&id=1614694332080845
8. Тихомирова В. А., Продовольственная безопасность: сущность понятия //Вестник РЭУ им. Г. В. Плеханова 2015, № 6 (84).
9. Ускова Т. В., Селименков Р.Ю., Анищенко А.Н., Чекавинский. А.Н., Продовольственная безопасность региона, Вологда, ИСЭРТ РАН, 2014. ФАО, Положение в области продовольственной безопасности и питания в мире - 2021, Глава 2. Продовольственная безопасность и питание в мире.
10. О введении временного запрета на вывоз зерновых культур за пределы территории Российской Федерации, Постановление Правительства Российской Федерации от 14 марта 2022 г. № 362, М.
11. WFP, Research, Assessment and Monitoring Division. 2020.
12. UNO Food and Agriculture Organization [Electronic resource]. Regime of availability
13. What is Food Security? https://www.worldbank.org/en/topic/agriculture/brief/food-security-update/what-is-food-security

МАРИЕТА КАЗАРЯН
Экономика, бакалавриат, 3-й курс

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ключевые слова: *продовольственная безопасность, уровень самодостаточности, потребительская корзина, продовольственный баланс, общедоступность, импорт*

Обеспечение продовольственной безопасности является одной из важных составляющих национальной безопасности. Продовольственная безопасность тесно связана с социально-экономической стабильностью и экономическим развитием страны. Сегодня новые геополитические события, в частности российско-украинская война, показывают, что Армении необходимо искать альтернативные пути импорта основных продуктов питания, поскольку и Россия, и Украина являются основными рынками сбыта продуктов питания, импортируемых в Армению. В статье были выдвинуты и решены следующие задачи: представить сущность продовольственной безопасности, оценить уровень продовольственной безопасности в РА, внести предложения по преодолению проблем продовольственной безопасности в РА в условиях современной экономической реальности. В статье проанализирован уровень самообеспеченности продуктами питания РА за последние годы, а также продовольственный баланс РА в 2021 году. В результате исследования мы пришли к выводу, что в последние годы РА имеет низкий уровень самообеспеченности по пшенице, растительному маслу, сахару, птице и свинине. Было предложено стимулировать отечественную продукцию путем предоставления льгот собственным производителям, а также проведения жесткой и целенаправленной государственной политики.

MARIETA GHAZARYAN
3rd year Bachelor, Department of Economics

CURRENT PROBLEMS OF FOOD SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *food security, level of self-sufficiency, food balance, shopping cart, availability, import*

Provision of food security is one of the important components of national security. Food security is closely related to socio-economic stability and economic development of the country. It is a complex of measures of a legal, organizational, logistical and other nature, which are aimed at the full provision of food of the necessary quality and sufficient quantity, safe for health, available to every member of society, including the most vulnerable segments of the population, and can be consumed by them at any time and in any situation, particularly during emergencies and martial law. Today, new geopolitical developments, namely the Russian-Ukrainian war, show that Armenia needs to look for alternative ways to import basic food products, since both Russia and Ukraine are the main markets for food products imported into Armenia. It should be noted that due to the closure of the only road leading from Armenia- to Artsakh in NKR, there does exist a problem of food security, and the population faces the challenge of maintaining the standard of living. The relevance and urgency of the article is due to these problems.